**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**
**ՆՄՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **23 մարտի 2022թ.**

2022թ-ի մարտի 23-ին ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ նաև՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման ՆՄՏԻԿ-ԳՀԾՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Հ. Արշունց՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի աշխատակազմի ղեկավար;

Ա. Վրթանեսյան՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի փոխտնօրեն;

Մ. Հարությունյան՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ֆինանսաբյուջետային բաժնի պետ;

Թ. Զաքարյան՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի տնտեսական բաժնի պետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Արշունցը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ֆինանսաբյուջետային բաժնի գնումների մասնագետ Հ. Գուլաբյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, բացակայում էր «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ֆինանսաբյուջետային բաժնի հաշվապահ Ա. Մխիթարյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/21 բողոքի քննության որոշումը կատարելու մասին:

3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

4. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

5. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԹԻՎ ԳԲՔԱ-ՆԳ-2022/21 ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/21 որոշումը՝ Հանձնաժողովը որոշեց.

1. 22.02.2022թ-ին տեղի ունեցած Հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՍՊԸ-ի կողմիցն երկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու որոշումը դադարեցնել:
2. 22.02.2022թ-ին տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ և ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Չափաբաժնի Անվանում | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը | Մասնակիցների առաջարկած գները Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ֆինանսական աուդիտի ծառայություններ | «ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ | 720000 | 720000 | 144000 | 864000 |
| | | «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | | 490000 | 98000 | 588000 |
| | | «Քրոու ընդ | | 600000 | 120000 | 720000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ատրյանս» ՍՊԸ | | | | |
| | | «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՍՊԸ | | 400000 | 80000 | 480000 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

23.03.2022 թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ՝ | բավարար |
| | «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ՝ | բավարար |
| | «Քրոու ընդ Ատրյանս» ՍՊԸ՝ | բավարար |
| | «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՍՊԸ՝ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 4 | «ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ | | 720000 |
| | 2 | «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | | 490000 |
| | 3 | «Քրոու ընդ Ատրյանս» ՍՊԸ | | 600000 |
| | 1 | «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՍՊԸ | X | 400000 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ 24.02.2022թ-ին ներկայացվել է բողոք, որի շրջանակում 22.03.2022թ-ին տեղեկագրում՝ բողոքներ քննող անձի կողմից հրապարակվել է որոշում:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Արչունց

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Վրթանեսյան

Մ. Հարությունյան

Թ. Զաքարյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան